Raymond Kévorkian, Paul Paboudjian, Les Arméniens de l'Empire Ottoman à la veille du génocide, Paris, 1992, 600p.

ՌԱՅՄՈՆ ԳԵՎՈՐԿՅԱՆ ԵՎ ՊՈԼ Հ. ՓԱՔՈՒՃՅԱՆ. *Հայերը Օսմանյան կայսրության մեջ ցեղասպանության նախօրյակին, Փարիզ, 1992, 600 էջ։*

Ռայմոն (Հարություն) Գևորգյանի և Պոլ Հ. Փաքուճյանի գրախոսվող մեծարժեք ու մեծածավալ գիրքը հեղինակների երկարամյա ու վերին աստիճանի բարեխիղճ պրպտումների արդասիքն է։ Այն բաղկացած է 600 մեծադիր էջից, 925 մեծ ու փոքր չափսի լուսանկարից, 29 քարտեզից, մոտ 6000 անձնանունների ու տեղանունների ցանկից, որոնք ընդգրկում են Արևմտյան Հայաստանի, Հայկական Կիլիկիայի և Օսմանյան կայսրության ամբողջ տարածքում սփռված հայաշատ վայրերի՝ քաղաքների, գավառների, նահանգների մեծ ու փոքր հարյուրավոր հայկական գյուղերի պատմությունը հին ժամանակներից, նրանց հիմնադրության օրերից սկսած մինչև հայկործան պատերազմը և 1915-ի աղետը։

Այս ահռելի փաստագրական նյութը հեղինակները երկար տարիների ընթացքում քաղել են հայ ու օտար աղբյուրներից՝ սկսած Ֆրանսիայի արտաքին գործոց մինիստրության արխիվները և վերջացրած Կ. Պոլսի հայ պատրիարքարանի դիվանները, ֆրանսիացի, թուրք, անգլիացի, հայ պատմաբանների աշխատություններից։ Գրքի առաջին մասի յոթ գլուխների վերնագրերն ինքնին խոսուն են. քաղաքական ու կրոնական աշխատություններ, Հայ ազգային ղեկավարների քաղաքականությունը, ժողովրդագրական ու տարածքային հարցեր, Մարդը և հողը, ժողովրդագրություն և վարչական կտրատումներ, Տնտեսությունը և հասարակությունը, Հայկական վերածնունդ, Կաթոլիկ և բողոքական համայնքներ։

Երկրորդ մասում, որը վերնագրված է Մարդիկ և նրանց հողը, լուսանկարներով շարադրվում է հայերի կյանքն ու գործը հետևյալ գլուխներում՝ Մայրաքաղաքը (Կոստանդնուպոլիս, Թրակիա), էգեյան ծովափ (Զմյուռնիա, Կոնիայի վիլայեթ և այլն), Անատոլիա, Կիլիկիա և Բարձր Հայք։ Եվ այս ամենը արվում է ըստ վիլայեթների, սանջակների, գավառակների՝ նրանց մեջ մտնող քաղաքներով ու գյուղերով։ Չկա հայ ժողովրդի արևմտյան հատվածի կենսագործունեության որևէ մի բնաղավառ, նրա կյանքի ու պայքարի որևէ մի կողմ, որը դուրս մնացած լիներ այս հոյակապ հատորի տեքստից ու պատկերներից։

Հիրավի, դնահատելի մի գործ, արևմտահայության յուրօրինակ մի հանրագիտարան, որը ֆրանսախոս ընթերցողին հասկանալի է դարձնում, թե ի՞նչ արժեքներ են ստեղծել և թողել քաղաքակրթությանն Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության տարածքում ապրած հայերը, և թե ինչու նրանց ժառանգներն այսօր չեն ապրում իրենց պապենական հողերում։

Վերջում կցանկանայի ասել, որ առաջին հեղինակը՝ Ռայմոն Գևորգյանը, հայտնի է և որպես Փարիզի Նուպարյան մատենադարանի տնօրեն, և՝ որպես շնորհալի ուսումնասիրող, գիտական մի շարք գործերի հեղինակ։ Մասնավորապես նա պրոֆեսոր Ժան-Պիեռ Մահեի հետ 1988 թ. ֆրանսերեն հրատարակել է «Հայաստան. 3000-ամյա պատմություն» հանրագիտարանը։

Ռ. Գ. ՍԱՀԱԿՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր